ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

««««ՏԱՎՈՒՇ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 697-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ «Գ» ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով ««««ՏԱՎՈՒՇ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. 2026 թվականի հոկտեմբերի 19-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ««ՏԱՎՈՒՇ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» հասարակական կազմակերպության (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը, որով Դիմողը խնդրել է.

«(…)

(…) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված այն նորմատիվ բովանդակությամբ, որի համաձայն՝ այն պայմանագրի կողմին տալիս է որոշակի ժամկետով կնքված և պետական գրանցմամբ ամրագրված անհատույց օգտագործման պայմանագրից դրա գործողության

ընթացքում առանց օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ նյութական հիմքի «ցանկացած ժամանակ» միակողմանի հրաժարվելու իրավունք՝ անկախ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 2-րդ մասով համապատասխանաբար կիրառելի ճանաչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 1-ին մասի ու 2-րդ մասի առաջին պարբերության ժամկետային կառուցակարգից և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 696-րդ հոդվածով նախատեսված վաղաժամկետ լուծման հատուկ հիմքերից, ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածը՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված այն նորմատիվ բովանդակությամբ, որի համաձայն համայնքի ղեկավարի՝ համայնքը ներկայացնելու ընդհանուր լիազորությունն ինքնին բավարար է համայնքի սեփականության նկատմամբ որոշակի ժամկետով և պետական գրանցված օգտագործման իրավունքը վաղաժամկետ ամբողջությամբ դադարեցնելու համայնքի կամքը ձևավորելու համար՝ առանց Սահմանադրությամբ և օրենքով համապատասխան գույքային հետևանքը ձևավորելու իրավասություն ունեցող մարմնի կամահայտնության, ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին, 75-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր՝ Սահմանադրության 6-րդ, 182-րդ և 184-րդ հոդվածներով սահմանված իրավասության չափանիշների լույսի ներքո:

(...) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածը՝ Դիմողի նկատմամբ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված այն նորմատիվ բովանդակությամբ, որով համայնքի՝ որպես պայմանագրի կողմի հրաժարման իրավունքի առկայությունը բավարար է համարվում համայնքի ղեկավարի կամահայտնության իրավաչափության համար՝ բացառելով համայնքի անունից այդ իրավունքն իրացնելու նրա նյութական իրավասության ինքնուրույն և պատճառաբանված դատական սպուգումը, այդ թվում՝ վեճը բացառապես պայմանագրային որակելու հետևանքով, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

(…) Այլընտրանքային կարգով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող միայն այն սահմանադրաիրավական մեկնաբանությամբ, որի համաձայն՝ (ա) հոդվածի «ցանկացած ժամանակ» հրաժարման կանոնը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 2-րդ մասի միջոցով կիրառելի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի ժամկետային կառուցվածքի հետ համակարգային կապով չի վերացնում որոշակի ժամկետի իրավական նշանակությունը, և որոշակի ժամկետով պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը պահանջում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված համապատասխան նյութական հիմք, և (բ) համայնքի՝ որպես պայմանագրային կողմի հրաժարման իրավունքը չի սրեղծում կամ ընդլայնում համայնքի ղեկավարի հանրային իրավասությունը և կարող է համայնքի անունից իրացվել միայն համապատասխան գույքային հետևանք ձևավորելու իրավասություն ունեցող մարմնի իրավաչափ կամահայտնության հիման վրա: Նույն մեկնաբանությամբ՝ համայնքի անունից հրաժարման իրավունքն իրականացնող մարմնի նյութական իրավասությունը ենթակա է ինքնուրույն դատական սրուգման, իսկ դրա վերաբերյալ գործի ելքի համար վճռորոշ առարկությունը՝ հստակ և պատճառաբանված դատական պատասխանի՝ անկախ վեճի քաղաքացիաիրավական կամ հանրային-իրավական որակումից:

(…) «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի հետ համակարգային կապում և իրավակիրառ պրակտիկայում դրան տրված այն նորմատիվ բովանդակությամբ, որի համաձայն պայմանագրից հրաժարվելու պատշաճ ծանուցման փաստը հաստատող փաստաթուղթը պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու բավարար հիմք է՝ առանց նախապես պարզելու օրենքով կամ պայմանագրով նախատեսված հրաժարման նյութական հիմքի և իրավասու սուբյեկտի կողմից դրա ձևավորված լինելու առկայությունը, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասին, 75-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

(…) Այլընտրանքային կարգով՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետը՝ ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի հետ համակարգային կապում, ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող միայն այն մեկնաբանությամբ, որի համաձայն պայմանագրից հրաժարվելու պատշաճ ծանուցման փաստը հաստատող փաստաթուղթը պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հիմք է միայն այն դեպքում, երբ այն հաստատում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված, նյութապես իրավաչափ և իրավասու սուբյեկտի կողմից ձևավորված հրաժարման ծանուցումը և ինքնուրույն չի ստեղծում ո՛չ հրաժարման նյութական հիմք, ո՛չ էլ այն ձևավորող հանրային մարմնի իրավասություն:

(…) Սահմանադրահամապատասխան մեկնաբանություն սահմանելու դեպքում արձանագրել, որ վիճարկվող դրույթները Դիմողի նկատմամբ կիրառվել են այլ՝ Սահմանադրությանը չհամապատասխանող մեկնաբանությամբ՝ առաջացնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ վերջնական դատական ակտի նոր հանգամանքով վերանայման իրավական հետևանքը»:

2. Ներկայացնելով թիվ ՎԴ6/0093/05/23 քաղաքացիական (նախկինում՝ վարչական) գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը Սահմանադրական դատարանի առջև բարձրացնում է հետևյալ իրավական հարցադրումները. «Արդյո՞ք Սահմանադրության 60-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությունը, համաձայն որի «ցանկացած ժամանակ» պայմանագրից հրաժարվելու իրավունքը տարածվում է նաև որոշակի ժամկետով կնքված և պետական գրանցմամբ ամրագրված անհատույց օգտագործման պայմանագրի վրա՝ դրա գործողության ընթացքում առանց օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ նյութական հիմքի, չնայած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 2-րդ մասով կիրառելի ճանաչված 612-րդ հոդվածի ժամկետային կառուցակարգին և 696-րդ հոդվածով նախատեսված վաղաժամկետ լուծման հատուկ հիմքերին:

Արդյո՞ք Սահմանադրության 6-րդ, 60-րդ, 75-րդ, 79-րդ, 182-րդ և 184-րդ հոդվածների համակարգային իմաստին համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածին տրված այն մեկնաբանությունը, որով համայնքի ղեկավարի՝ համայնքը ներկայացնելու ընդհանուր լիազորությունն ինքնին բավարար է համարվել ավագանու կողմից որոշակի ժամկետով ձևավորված և պետական գրանցված համայնքային գույքի օգտագործման ռեժիմը վաղաժամկետ վերացնելու կամքը ձևավորելու համար:

Արդյո՞ք Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի և 75-րդ հոդվածի պահանջներին համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված այն նորմատիվ բովանդակությունը, որով համայնքի՝ որպես պայմանագրի կողմի հրաժարման իրավունքի առկայությունը բավարար է համարվում համայնքի ղեկավարի կամահայտնության իրավաչափության համար՝ բացառելով այդ իրավունքը համայնքի անունից իրացնելու նրա նյութական իրավասության ինքնուրույն և պատճառաբանված դատական ստուգումը: Այս հարցը պահպանվում է անկախ վեճի քաղաքացիաիրավական կամ հանրային-իրավական որակումից»:

Դիմողը գտնում է, որ վերոնշյալ իրավական հարցադրումները փոխկապակցված են, և ընդհանուր քաղաքացիաիրավական նորմի կիրառված մեկնաբանությունը չի կարող անորոշ դարձնել որոշակի ժամկետով պետական գրանցում ստացած գույքային իրավունքի բովանդակությունը, համայնքի ղեկավարին վերագրել օրենքով չսահմանված նյութական իրավասություն, ինչպես նաև հանրային իշխանության իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողությունը փոխարինել միայն պայմանագրից հրաժարվելու իրավունքի ստուգմամբ: Միաժամանակ, Դիմողի պնդմամբ՝ սկզբնական պահանջների հանրային-իրավական բնույթից և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10 և 11-րդ հոդվածներից հետևում է, որ խնդրո առարկա գործը պետք է քննվեր վարչադատավարական կարգով:

Ըստ Դիմողի՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետը վիճարկվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի հետ համակարգային կապում՝ այն

նորմատիվ բովանդակությամբ, որի համաձայն՝ պայմանագրից հրաժարվելու պատշաճ ծանուցման փաստը հաստատող փաստաթուղթն ինքնին բավարար հիմք է պետական գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար՝ առանց նախապես պարզելու հրաժարման նյութական հիմքի և այն ձևավորած սուբյեկտի իրավասության առկայությունը:

Դիմողը նշում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության արդյունքում տվյալ դրույթը կիրառվել է այնպես, որ որոշակի ժամկետով կնքված պայմանագիրը ևս կարող է դադարեցվել ցանկացած ժամանակ՝ առանց վաղաժամկետ դադարեցման որևէ առանձին նյութական հիմքի, հետևաբար՝ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված նման մեկնաբանության պայմաններում անհրաժեշտ է սահմանադրաիրավական գնահատման ենթարկել այն հարցը, թե արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոխկապակցված դրույթների համակցությամբ ձևավորված իրավակարգավորումը բավարար չափով որոշակի և կանխատեսելի է՝ պայմանագրի կողմին հնարավորություն տալու գնահատելու իր՝ որոշակի ժամկետով ձեռք բերված և պետական գրանցմամբ ամրագրված գույքային իրավունքի պահպանման իրավական երաշխիքները:

Դիմողը պնդում է, որ «(…) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածը կարող է պահպանվել իրավակարգում սահմանադրահամապատասխան մեկնաբանությամբ, եթե «ցանկացած ժամանակ» հրաժարման կանոնը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 2-րդ մասով համապատասխանաբար կիրառելի ճանաչված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի ժամկետային կառուցվածքի հետ ընթերցվի և մեկնաբանվի այնպես, որ այն վերաբերի անորոշ ժամկետով իրավահարաբերությանը, իսկ որոշակի ժամկետով պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը տեղի ունենա օրենքով կամ պայմանագրով նախատեսված համապատասխան նյութական հիմքով: Այս մեկնաբանությունը միաժամանակ իրավական նշանակություն է պահպանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի հղման, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 696-րդ

հոդվածի հատուկ վաղաժամկետ լուծման ռեժիմի և կողմերի որոշած ժամկետի համար»:

Դիմողը նաև նշում է, որ «Այլընտրանքային կարգով, եթե Սահմանադրական դատարանը գտնի, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածն օրենսդրի հստակ կամքով տարածվում է նաև որոշակի ժամկետով պայմանագրերի վրա և թույլ է տալիս դրանք առանց նյութական հիմքի դադարեցնել, ապա սահմանադրական վերահսկողության առարկան պետք է լինի հենց այդ նորմատիվ բովանդակությունը՝ Սահմանադրության 60-րդ, 75-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածների լույսի ներքո: Այդ դեպքում պետք է պարզվի, թե արդյո՞ք բավարար որոշակիությամբ և համաչափությամբ կարող էր թույլատրվել երկարաժամկետ, պետական գրանցում ստացած գույքային իրավունքի անվերապահ դադարեցում՝ միաժամանակ պահպանելով ժամկետի և վաղաժամկետ լուծման առանձին կանոնները»:

Ըստ Դիմողի՝ սույն գործով ՀՀ դատարանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածից բխեցրել են համայնքի՝ որպես պայմանագրի կողմի իրավունքը և այն, միաժամանակ, վերագրել համայնքի ղեկավարին՝ առանց առանձին պարզելու, թե արդյո՞ք վերջինս իրավասու էր միանձնյա կերպով փոխելու ավագանու մասնակցությամբ 25 տարի ժամկետով ձևավորված գույքային ռեժիմը:

Դիմողը գտնում է, որ խնդրո առարկա գործով սկզբնական հայցի հիմնական առարկան հանրային իշխանության մարմնի գործողության և որոշման իրավաչափության դատական ստուգումն էր, այլ ոչ թե երկու իրավահավասար սուբյեկտների միջև պայմանագրի լուծման վերաբերյալ ինքնուրույն մասնավոր վեճը: Հետևաբար՝ Դիմողի պնդմամբ՝ տվյալ իրավահարաբերություններից ծագած գործը պետք է քննվեր վարչադատավարական կարգով՝ մասնագիտացված վարչական արդարադատությանը բնորոշ երաշխիքների կիրառմամբ:

Միաժամանակ, Դիմողը քննարկվող համատեքստում ընդգծում է, որ տվյալ գործով կայացված դատական ակտերում «(…) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածը մեկնաբանվել է որպես 25 տարվա պայմանագրերից առանց առանձին նյութական հիմքի հրաժարվելու իրավունք, իսկ համայնքի ղեկավարի իրավասության հարցը դիտարկվել է դրա ներքո: «Գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի կիրառմամբ ծանուցումը համարվել է գրանցված իրավունքների դադարման համար բավարար հիմք: Այս իրավական կառուցակարգով Դիմողի հիմնական հանրային-իրավական պահանջների վարչադատավարական քննության անհրաժեշտությունը չի ստացել ինքնուրույն որոշիչ նշանակություն»:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ**.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական վերոհիշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

*գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված **նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և*

ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին****:*

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ***»:

Այս առումով Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման**, **վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման**, **այլ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի (սույն պարագայում՝ դրույթների**, **ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատման հարցեր**:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել են այնպիսի հարցեր, որոնք **ենթակա չեն Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով **Դիմողը**, **ձևականորեն վիճարկելով** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի (իրավակիրառ պրակտիկայում

դրանց տրված մեկնաբանության) **սահմանադրականությունը**, **ըստ էության**, **բարձրացնում է տվյալ դրույթների կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես, Դիմողը սույն անհատական դիմումով ներկայացրել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«(...) Դիմողի հայցի հիմնական պահանջները հանրային-իրավական էին, իսկ օգտագործման իրավունքների պետական գրանցումների վերականգնումը՝ դրանցից ածանցվող գույքային հետևանքի վերացման պահանջ: Այս կառուցվածքով վեճը պետք է քննվեր վարչադատավարական կարգով, այլ ոչ թե ամբողջությամբ վերաորակվեր որպես մասնավոր-իրավական պայմանագրային վեճ»:*

Դիմողը նաև նշել է հետևյալը. *«(...) Դատարանները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածից բխեցրել են համայնքի՝ որպես պայմանագրի կողմի, իրավունքը և այն միաժամանակ վերագրել համայնքի ղեկավարին՝ առանց առանձին պարզելու, թե արդյոք վերջինս իրավասու էր միանձնյա փոխելու ավագանու մասնակցությամբ 25 տարի ժամկետով ձևավորված գույքային ռեժիմը»:*

Ողջ վերոշարադրյալի հաշվառմամբ, նկատի ունենալով նաև Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ **վերջինս իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՎԴ**6/0093/05/23 **քաղաքացիական** (**նախկինում՝ վարչական**) **գործով ՀՀ դատարանների կողմից կայացված դատական ակտերի առնչությամբ**: Մասնավորապես՝ Դիմողը վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) **հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում**, իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են խնդրո առարկա քաղաքացիական (նախկինում՝ վարչական) գործով **ՀՀ դատարանների գործողությունների** (**կայացրած դատական ակտերի**) **իրավաչափությանը**:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով Դիմողի բարձրացրած հարցերի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթների

(իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) սահմանադրականության գնահատում, այլ թիվ ՎԴ6/0093/05/23 քաղաքացիական (նախկինում՝ վարչական) գործով ՀՀ դատարանների գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, ինչը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից**:

Ուստի՝ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝** Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցերի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով**:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

««««ՏԱՎՈՒՇ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 697-րդ հոդվածի և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

17 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-248